

# Մարապատ

Վարչական պատասխանատու՝ Մարտիրոսյան Կառլեն

Հեռ 091-64-65-99

**Մակերես՝ 11.2կմ<sup>2</sup>**

**Բնակչություն՝ 117**

[sarapat.shirak@mta.gov.am](mailto:sarapat.shirak@mta.gov.am)

Գյուղ Աշոցքի տարածաշրջանում, Աշոցքից 15-18կմ հարավ-արևելք, մարզկենտրոնից գտնվում է 38կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Սամոլի, Սամորլու, Սամուռլի, Սամուրլի անվանումները: Մարապատ է վերանվանվել 1946 թ-ին:

Գյուղը տեղադրված է Չիչկան գետի ձախափնյակում՝ ծովի մակարդակից 1970մ բարձրության վրա: Ունի ցուրտ կլիմա, սակավ տեղումներ: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ:

Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններն են: Ունի աղբյուրներ, որոնք օգտագործվում են որպես խմելու ջուր: Գյուղը զգալի տուժել է 1988 թ-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժից: Գյուղի բնակչության նախնիների մի մասը տեղափոխվել է Արևմտյան Հայաստանի Բասենի շրջանից 1828-1829թթ: 1873 թ-ին գյուղն ունեցել է 165, 1897 թ-ին՝ 282, 1926 թ-ին՝ 242, 1939 թ-ին՝ 348, 1959 թ-ին՝ 158, 1979 թ-ին՝ 170, 1989 թ-ին՝ 67հայ բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 117 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 49%, կանայք՝ 51%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 28%, աշխատունակներ՝ 53%, հետաշխատունակներ՝ 19%: Ունի 30 տնտեսություն: Ունի տարրական դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց:

Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը անասնապահությունն է: Գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն վարելահողերը (130հա), խոտհարքերը (17հա): Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր՝ կազմելով համապատասխանաբար 39 և 797 հեկտար: Զբաղվում են հացահատիկային, բանջարաբուստանային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ: Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնապահությամբ, թռչնաբուծությամբ:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

ՀՀ Շիրակի մարզ, Մարապատ համայնք  
Ինդեքս՝ 2805